# Արձանագրություն 2

«ԵՏ-ԳՀԾՁԲ 04/20-3» ծածկագրով մրցույթի գնանշման հարցում ընթացակարգի
հայտերի բացման նիստի

ք. Երևան 17.02.2020թ.
ժ.10:00

Մասնակցում են՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | - | Ե.Խաչիբաբյան |
| անդամներ | - | Մ.Ղազարյան, Ա.Աբգարյան, Մ.Մովսիսյան, Ա.Խաչատուրյան |
| Ներկա է | - | «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի լիազորված անձ Վ.Գևորգյանը |

## Հայտերի բացման մասին

---

1. Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ 13142586 (տասներեք միլիոն հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամ:

2. Հրավերով սահմանված ժամկետում և սահմանված պահանջներին համապատասխան գնային առաջարկներ է ներկայացրել «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Մյասնիկյան 22/4):

3. Միակ մասնակցի ներկայացրած գնային առաջարկները համապատասխանում են «ԵՏ-ԳՀԾՁԲ 04/20-3» ծածկագրով մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման՝ բացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Քվեարկություն՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Միակ մասնակցի ներկայացրած ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը և առաջարկած գնման առարկաների տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին գնահատվել է որպես համապատասխանող (ճիշտ):

Քվեարկություն՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Մասնակիցների կողմից առաջարկված գները (որոնց մեջ չի մտնում ԱԱՀ-ն) անհրաժեշտ չափաբաժինների համար ներկայացված են ստորև աղյուսակում.

| Չափա-բաժին | Ծառայության անվանումը | «Մ-Բի-Ռ» ՍՊԸ |
|---|---|---|
| 1 | ԳԱՋ-31-2 Crisler մակնիշի մեքենաների տեխնիկական սպասարկում | 3 597 000 |
| 2 | ԳԱԶ մակնիշի մարդատար մեքենաների տեխնիկական սպասարկում | - |
| 3 | ՎԱԶ և ԶԱԶ մակնիշի մեքենաների տեխնիկական սպասարկում | 4 000 000 |

6. Ներկայացված գնային առաջարկներից 3-րդ չափաբաժնի գինը բարձր է նախահաշվային գնից: Նիստում տարվեցին բանակցություններ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի լիազորված անձ Վ.Գևորգյանի հետ: Արդյունքում վերջինս 3-րդ չափաբաժնի համար առաջարկեց նոր գին՝ 3780000 ՀՀ դրամ, որը ընդունվեց հանձնաժողովի կողմից:

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

ա) 1 և 3 չափաբաժիններում հաղթող ճանաչել՝ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին:

բ) 2 չափաբաժնի համար գնային առաջարկ չլինելու պատճառով այդ չափաբաժնի համար գնանշման հարցումը համարել չկայացած:

Քվեարկություն ՝ կողմ - 5, դեմ - 0:

8. Սույն արձանագրությունը ծանուցել ընթացակարգի միակ մասնակցին էլետրոնային փոստի միջոցով:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 18.02.2020 թ. ժ. 10-00:

Հանձնաժողովի նախագահ՝ Ե.Խաչիբաբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Սահակյան

անդամ Մ.Ղազարյան

Ա.Աբգարյան

Մ.Մովսիսյան

Ա.Խաչատուրյան